ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 102

ծառայությունների վճարովի մատուցման մասին

ք. Երևան 25. 05. 2017թ

«Ոսկան Երևանցի» տպագրատուն-արտադրահրատարակչական ԲԲԸ-ն, հետագայում՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Մ.Մ. Սարգսյանի, որը գործում է ըստ ԲԲԸ **կանոնադրության և ՀՀ կառավարության հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրման լիցենզիայի , մի** կողմից - Նոյեմբերյանի պետական քոլեջ ՊՈԱԿ հետագայում«Պատվիրատու» ի դեմս տնօրեն Ա. Ղազարյանի որը գործում է ըստ կանոնադրության , մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել դիպլոմների և դիպլոմների հավելվածների մատուցման ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Աշխատանքների կատարման և մատուցման ժամկետն է 30.12..2017թ.:

1.3. Ծառայությունները մատուցվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված միասնական բաշխման ցուցակի համաձայն:

1.4. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *Կատարողը պարտավոր է՝*

ա) ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

բ) անձամբ կատարել ծառայությունները,

գ) Պատվիրատուի պահանջով տասը աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գնին և քանակին համապատասխան:

2.3. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

ա) ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը,

բ) մինչև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մատուցված ծառայությունների չափին՝ մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով մեկ դիպլոմի գինը կազմում է 3200 (երեք հազար երկու հարյուր) դրամ: Գնի մեջ ներառված է նաև ավելացված արժեքի հարկը:

3.2.ա) Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է մինչև ծառայությունների մատուցումը:

բ) Պայմանագրային գինը պատվիրատուի կողմից կարող է վճարվել նաև կանխավճարային կարգով, մինչև ընդհանուր արժեքի 50%-ի չափով

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների կարգով, երկկողմ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.2. Սույն այմանագիրը կազմված է մեկ թերթից, 2 էջով, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3. Կողմերի հասցեները և վավերապայմանները՝

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» տպագրատուն ԱՀ ԲԲԸ	Նոյեմբերյանի պետական քոլեջ ՊՈԱԿ
Երևան, 0056, Նոր Նորքի 1-ին զանգված	Ք. Նոյեմբերյան, Շիրազի 17
Սաֆարյան փ. 11/1	Հ/Հ 2476802290660000
Հ/Հ 220463330997000	Արդշինբանկ ՓԲԸ Նոյեմբերյանի մ/ճ
Ագբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ	ՀՎՀՀ 07400783
ՀՎՀՀ 02502806	
ՏՆՕՐԵՆ	ՏՆՕՐԵՆ
_____ Մ.Մ. ՍԱՐԳՍՅԱՆ	_____ Ա. ՂԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«22» Դեկտեմբեր 2017 թ. ք. Երևան

«Արաքս հրատարակչություն» ՍՊԸ-ն (հետագայում Կատարող), ի դեմս տնօրեն Հովսեփ Խուրշուդյանի, որը գործում է ըստ կանոնադրության և Հայաստանի Հանրապետության քաղաքացի Գրիգոր Հրաչի Հարությունյանի (հետագայում՝ Պատվիրատու), ի դեմս կիսատ Հրաչի Հարությունյանի որը գործում է ըստ կանոնադրության, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը իրականացնում է Պատվիրատուի մասին տեղեկատվության զետեղումը Կատարողի կողմից հրատարակվող «Հայաստանի քոլեջները և արհեստագործական ուսումնարանները 2017-2018թթ.» (հետագայում՝ Տեղեկատու) 1 (մեկ) սև-սպիտակ էջում և տրամադրում է նրան տեղեկատուի 3 (երեք) օրինակ:

2. ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարողը պարտավորվում է.

2.1. Մինչև տեղեկատուի տպագրումը Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել իրեն վերաբերող գովազդային էջի մշակված, էջադրած և ձևավորած օրինակը:

2.2. Պատվիրատուի պահանջով ծանոթացնել նրան իրեն հատկացված էջի նախապատրաստման, մշակման, էջադրման և ձևավորման աշխատանքների ընթացքին:

3. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատուն ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. Կատարողին է տրամադրում իրեն հատկացված էջում տեղադրվելիք գովազդի բովանդակությունը:

3.2. Պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրված տեղեկատվության արժանահավատության և ճշգրտության համար:

3.3. Սույն պայմանագրի կնքումից ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում վճարում է Կատարողին

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 23000 (Քսաներեք հազար) դրամ (փոխանցումով):

4.2. Պատվիրատուն պարտավորվում է ամբողջությամբ վճարել պայմանավորված գինը Կատարողին սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների կատարման օրվանից 3 օրվա ընթացքում (կանխիկ կամ փոխանցումով):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրի հետ կապված բոլոր վիճահարույց հարցերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ գործող օրենսդրության սահմաններում:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմից:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն միևնույն հավասարազոր իրավաբանական ուժը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և կնքման պահից և կորցնում է իր ուժը Կողմերի կողմից փոխադարձ պարտավորությունները կատարելուց հետո:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԱՐԱՔՍ հրատարակչություն» ՍՊԸ	«Նոյեմբերյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ
Երևան, Կոմիտասի 5ա, բն 13	Նոյեմբերյան, Գրիգոր Նարեկացի 1
h/h 1570010302510100	h/h 247680229666000
Ամերիաբանկ ՓԲԸ	ՀԱՎԲ «Նոյեմբերյան» մասնաճյուղ
ՀՎՀՀ 01239654	ՀՎՀՀ 07400783
ՏՆՕՐԵՆ՝ Հ. Խուրշուդյան	ՏՆՕՐԵՆ՝